ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի սեպտեմբերի 15-ից 17-ը

Ռուսաստանի Դաշնություն (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ռուստամ Բադասյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, սեպտեմբերի 15-ից 17-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ռուսաստանի դաշնային հարկային ծառայության կողմից կիրառվող հարկային վարչարարության իրականացման ընթացքում կիրառվող տեխնոլոգիաներին ծանոթանալու, ինչպես նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության միջև երկկողմ համագործակցության հարցերի քննարկման նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Հանդիպման ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության ղեկավարները քննարկել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության անունից ստորագրված «Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների միջև վստահված երրորդ կողմի մեխանիզմի կիրառմամբ անդրսահմանային առևտրի ժամանակ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման պիլոտային ծրագրի իրականացման մասին» ճանապարհային քարտեզի իրագործման ընթացքը:

Այցի ընթացքում քննարկված թեմաներից են Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության կողմից հարկային վարչարարության իրականացման նպատակով

մշակված էլեկտրոնային ծառայությունները, և բջջային հավելվածների կիրառման փորձը ինքնազբաղ հարկ վճարողների հարկման համակարգում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Կայացել է հանդիպում Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության ղեկավար Դանիիլ Եգորովի հետ, որի ընթացքում վերջինս ներկայացրել է հարկային վարչարարության իրականացման նպատակով մշակված էլեկտրոնային ծառայությունները, որից հետո մտքեր են փոխանակվել համագործակցության հետագա ուղղությունների վերաբերյալ: Երկու մարմինների ղեկավարների կողմից բարձր է գնահատվել Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտների միջև վստահված երրորդ կողմի մեխանիզմի կիրառմամբ անդրսահմանային առևտրի ժամանակ էլեկտրոնային փաստաթղթերի փոխանակման պիլոտային ծրագրի իրականացման ընթացքը:

Ռուսական կողմը ներկայացրել է նաև հարկային վարչարարության ոլորտում բջջային հավելվածների կիրառման փորձը ինքնազբաղ հարկ վճարողների հարկման համակարգում, որի ներդրումն էականորեն պարզեցրել է հարկ վճարող-հարկային մարմին փոխհարաբերությունները: Ներկայացվել են նաև համակարգի ներդրման ընթացքում առաջացած ռիսկերը և դրանց հաղթահարման ուղիները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Կողմերը պայմանավորվել են վերոհիշյալ ոլորտներում փորձի փոխանակման նպատակով ակտիվացնել շփումները նաև փորձագիտական մակարդակում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահը և Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության ղեկավարը շեշտել են բարձր մակարդակի սերտ շփումների հաճախականության պահպանման կարևորությունը, որն էականորեն խթանում է փոխադարձ պայմանավորվածությունների արդյունքում համատեղ ծրագրերի իրականացման ընթացքը:

Հանդիպման ավարտին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության դաշնային հարկային ծառայության ղեկավարները կարևորել են Հայաստանի և Ռուսաստանի հարկային մարմինների միջև հետագա փոխգործակցության անհրաժեշտությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

24"09.2021թ